

ABB - ԱԳՐՈ

ՀՀ-ում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

1 Պայմաններ	
1.1	Արժույթ
1.2	Տարեկան անվանական տոկոսադրույք
1.3	Պարտավորություն/ գրավ հարաբերակցություն
1.4	Ժամկետ
1.5	Մարման եղանակ
1.6	Արտոնյալ ժամկետ
1.7	Գումար
1.8	Վաղաժամկետ մարման տույժ, տուգանք
1.9	Գործողության տարածք

ՀՀ դրամ

14%, որի

- 11%-ը սուբսիդավորվում է պետության կողմից, եթե վարկը տրամադրվում է ներկրված ԽԵԿ ձեռք բերելու համար,
- 12%-ը սուբսիդավորվում է պետության կողմից, եթե վարկը տրամադրվում է ՀՀ-ում աճեցված տոհմային ԽԵԿ ձեռք բերելու համար,
- 14%-ը ամբողջությամբ սուբսիդավորվում է պետության կողմից, եթե վարկը տրամադրվում է ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սահմանամերձ համայնքների տնտեսվարողներին կամ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվներին:

- Ավանդային և բանկային հաշվիվներում առկա դրամական միջոցների մինչև 100%-ի չափով, ընդ որում՝ նույն արժույթի դրամական միջոցների՝ մինչև 100%-ի չափով, տարբեր արժույթների դեպքում՝ մինչև 95%-ի չափով,
- Անշարժ գույքի դեպքում՝ մինչև 70%-ի չափով,
- Շարժական գույքի դեպքում՝ մինչև 50%-ի չափով,
- Ապրանքանյութական պաշարների դեպքում՝ մինչև 30%, սակայն տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կառուցվածքում չի կարող գերազանցել 40%,
- Դրամական հոսքերի դեպքում՝ ոչ ավելի, քան բանկային հաշիվներով իրականացվող վերջին 12 ամիսների միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառության 50 տոկոսի չափով: Միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառությունը հաշվարկվում է վերջին 12 ամսվա կտրվածքով, իսկ 12 ամսից պակաս Բանկի հաճախորդ լինելու պարագայում՝ վերջին 6 ամսվա կտրվածքով:

1 - 5 տարի

Մայր գումարի և տոկոսագումարների մարումները՝ ամենամսյա

Մեկնարկային տարվա սկզբում՝ առավելագույնը՝ 12 ամիս

1,000,000 - 300,000,000 ՀՀ դրամ

Չի կիրառվում

ՀՀ

1.10	Ֆինանսավորման նպատակ	Հայաստանի Հանրապետությունում աճեցված Տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների (երինջներ և 14-17 ամսական էգ մատղաշներ (ներկրման դեպքում արտահանվող երկրում կարանտինի կանգնեցնելու, իսկ ՀՀ-ում՝ առուվաճառքի պայմանագրի կնքման դրությամբ)), ձեռքբերում և/կամ դրանց ներկրում:
1.11	Լրացուցիչ պայման	<ul style="list-style-type: none"> • Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր Վարկառու տարեկան կարող է ձեռք բերել առավելագույնը 300 գլուխ տոհմային խոշոր եղջերավոր կենդանի: • Ծրագրի շահառու չեն կարող հանդիսանալ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարության կողմից պետական աջակցության և/կամ այլ պետական ծրագրերի շրջանակներում խնդրահարույց պարտավորություններ ունեցող ֆիզիկական, իրավաբանական անձիք և անհատ ձեռնարկատերերը:
2	Բանկի միջնորդավճար	
2.1	Դիմում-հայտի ուսումնասիրության միջնորդավճար	0 ՀՀ դրամ
2.2	Սպասարկման միջնորդավճար	0 ՀՀ դրամ
2.3	Վարկային միջոցների կանխիկացման միջնորդավճար	0 ՀՀ դրամ
3	Ապահովվածություն	
3.1	Գրավի առարկա	Ավանդային և բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներ, անշարժ և շարժական գույք, հիմնական միջոցներ, երաշխիքներ և երաշխավորություններ, արժեթղթերի գրավ, բաժնետոմսի գրավ, բաժնեմասի գրավ, փայի գրավ, դրամական հոսքեր (դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունք), շրջանառու միջոցներ, իրավունքի գրավ, խառը գրավ և Բանկի կողմից ընդունելի այլ գրավ:
3.2	Լրացուցիչ պայման	Բնակելի նշանակության անշարժ գույքի գրավադրման ժամանակ Գրավատուն ներկայացնում է սեփականության իրավունքի ծագման հիմքերը, և եթե դրանք Գրավատուին են փոխանցվել նվիրատվության գործարքի հիման վրա և սեփականությունը փոխանցվել է Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացնելուն նախորդող հինգ տարվա ընթացքում, ապա. 1. պահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ նվիրատուի երաշխավորություն, ընդ որում տրամադրվող վարկի գումարը չի կարող գերազանցել գրավի գնահատված լիկվիդային արժեքի 50%-ը, կամ 2. պահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ երրորդ անձի երաշխավորություն, ընդ որում վարկի գումարը չի կարող գերազանցել գրավի գնահատված լիկվիդային արժեքի 25%-ը: * սույն ենթակետը կիրառելի չէ, եթե Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացման պահին նվիրատուն մահացած է
3.3	Պարտադիր պայման	<ul style="list-style-type: none"> ✓ Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ մասնակցի (մասնակիցների) 100% բաժնետոմսերի, բաժեմասերի, փայերի պարտադիր գրավադրում: ✓ Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ 10% և ավել բաժնետոմս, բաժեմաս, փայ ունեցող մասնակցի (մասնակիցների) կողմից երաշխավորության պարտադիր տրամադրում:
4	Գրավի գնահատում և	

	ապահովագրություն	
4.1	Գրավի արժեքի գնահատում	Անշարժ և շարժական գույքերի, հիմնական միջոցների, շրջանառու միջոցների գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից: Արժեթղթերի, Բանկի կողմից ընդունելի այլ գույքերի և իրավունքի գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից՝ ըստ անհրաժեշտության:
4.2	Ապահովագրություն	Ըստ անհրաժեշտության
5	Վարկառուի նկատմամբ պահանջներ	
5.1	Վարկառու	Իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր, ֆիզիկական անձինք
5.2	Վարկառուին ներկայացվող պահանջներ	Վերջին 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակ՝ ոչ ավել, քան 36 օր (եթե Վարկառուի գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 3 օրը՝ կուտակային սկզբունքով):
5.3	Լրացուցիչ պայման	Վարկառուի ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքում ստացվող ֆինանսական ցուցանիշները պետք է բավարարեն Բանկի պահանջներին:
6	Երաշխավորի նկատմամբ պահանջներ	
6.1	Երաշխավոր	ՀՀ-ում կամ ԱՀ-ում գրանցված ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ
6.2	Երաշխավորին ներկայացվող պահանջներ	<ul style="list-style-type: none"> • Առնվազն 6 ամսվա անընդմեջ գործունեություն ծավալած իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր և 21-63 տարեկան ֆիզիկական անձ. • Ժամկետանց պարտավորությունների բացակայություն (ներառյալ՝ տրամադրված երաշխավորությունների գծով). • Նախորդ 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակը չպետք է գերազանցի 36 օրը (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով), (եթե Երաշխավորի գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 3 օրը՝ կուտակային սկզբունքով):
7	Լրացուցիչ պայմաններ	
7.1	<p>Մինչ 31.10.2023թ. ներառյալ տրամադրված դրամական պարտավորությունների դեպքում՝</p> <ul style="list-style-type: none"> • Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով, • Դրամական պարտավորությունը պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարվելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի կատարման օրը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով, <p>01.11.2023 թվականից տրամադրված դրամական պարտավորությունների դեպքում՝</p> <p>Բանկն իրավունք ունի՝</p> <ul style="list-style-type: none"> • Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակել կիրառել Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը: 	

- | | |
|--|---|
| | <ul style="list-style-type: none">• Կիրառել տույժ՝ ժամկետանց տոկոսագումարի և ժամկետանց գումարի նկատմամբ 0.13%-ի չափով ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար: |
|--|---|